Բնապահպանական մշտադիտարկման հաշվետվություն

Ծրագրի համար՝ 42145-043

2025թ. հուլիս-դեկտեմբեր

Հայաստան՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր (Տրանշ 3)

Պատրաստվել է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից Ասիական զարգացման բանկի համար։

Բնապահպանական մշտադիտարկման սույն հաշվետվությունը վարկառուի փաստաթուղթն է։ Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱԶԲ տնօրենների խորհրդի, տնօրինության կամ անձնակազմի տեսակետները և կարող են նախնական լինել։

Ցանկացած երկրի ծրագիր կամ ռազմավարություն մշակելիս, ծրագիր ֆինանսավորելիս կամ տվյալ փաստաթղթում որոշակի տարածաշրջանի կամ աշխարհագրական տարածքի որևէ նշում կատարելիս, Ասիական զարգացման բանկը մտադիր չէ որևէ դատողություն անել ցանկացած տարածաշրջանի աշխարհագրական տարածքի իրավական կամ այլ կարգավիճակի վերաբերյալ։

Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն

Հայաստան՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3

Թալին-Լանջիկ հատված

Ծրագրի համար՝ 42145

2025թ. հուլիս-դեկտեմբեր

Հայաստան. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 (Ֆինանսավորվել է ԱԶԲ-ի կողմից)

Պատրաստվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից

Երևան, Հայաստան

Բովանդակություն

1.1 Նախաբան ..... Error! Bookmark not defined.
1.2 Ընդհանուր տեղեկատվություն ..... Error! Bookmark not defined.
2 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5
2.1 Ծրագրի նկարագրություն 5
2.2 Ծրագրի պայմանագրեր և կառավարում 6
2.3 Ծրագրի աշխատանքները ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում 9
2.4 Ծրագրի նախագծման ցանկացած փոփոխության նկարագրություն 9
2.5 Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված ցանկացած փոփոխության նկարագրություն 9
3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10
3.1 Բնապահպանական անվտանգության գործողությունների ընդհանուր նկարագրություն 11
3.2 Բուսահողի կառավարում 11
3.3 Շինարարական աղբի կառավարում 11
3.4 Բետոնի, ասֆալտի, քարջաղիչ գործարանների և ճամբարների շահագործում 11
3.5 Քարհանքերի և բացահանքերի շահագործում 12
3.6 Ծառահատման/ծառատնկման գործընթաց 12
3.7 Շինարարական տեղամասերի աուդիտ 12
3.8 ԱԶԲ առաքելություններ 13
3.9 Խնդիրների լուծում (հիմնվելով անհամապատասխանության ծանուցումների վրա). 13
3.10 Միտումներ 13
3.11 Շրջակա միջավայրի վրա չնախատեսված ազդեցություններ կամ ռիսկեր 13
4 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 14
4.1 Ընթացիկ ժամանակահատվածում անցկացված մոնիթորինգի արդյունքներ 14
4.2 Առողջություն և անվտանգություն 14
4.3 Վերապատրաստման դասընթացներ 14
5 ԿՇՄԿՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 15
5.1 ԿՇՄԿՊ-ի վերանայում 15

RESTRICTED. This information is accessible to selected ADB Management, staff, and/or business groups. It may not be shared with other parties without appropriate permission.

6 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
6.1 Արդյունավետ պրակտիկա 16
6.2 Բարելավման համար հնարավորություններ 16
7 ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 17
7.1 Բողոքներ 17
8 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ/ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ. 18
9 ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19
10 2026թ. հունվար-հունիս ժամանակահատվածի համար գործողությունների պլան 20
ՀԱՎԵԼՎԱԾ Ա՝ Տրանշ 3, Թալին-Լանջիկ հատվածի համար ՏՇՄԿՊ-ների կարգավիճակը և տեղամասերի շահագործումը 2025թ.-ի դեկտեմբերի դրությամբ 21

RESTRICTED. This information is accessible to selected ADB Management, staff, and/or business groups. It may not be shared with other parties without appropriate permission.

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԿՇՄԿՊ	Կապալառուի շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՆԲԳ	Նախնական բնապահպանական գնահատում
ԲՄ	Բնապահպանության գծով մասնագետ
ՇՄԱԿԾՂ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման ծառայությունների ղեկավար
ԲՖԳ	Բազմափուլ ֆինանսավորման գործիք
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՏՇՄԿՊ	Տեղանքին հատուկ շրջակա միջավայրի կառավարման պլան
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ՃԴ	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն
ՈԻԳՊ	Ուղղիչ գործողությունների պլան
ԹՎԺ	Թերությունների վերացման ժամանակահատված
ՀՏՄ	Հատուկ տեխնիկական մասնագրեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Նախաբան

Սույն բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունը ընդգրկում է **2025թ.-ի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածը** (համար 19)։

Հաշվետվությունը պատրաստվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից՝ համագործակցելով վերահսկող խորհրդատուի հետ։

1.2 Ընդհանուր տեղեկատվություն

Շինարարական աշխատանքներն իրականացվել են «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի և վերջինիս ենթակապալառու «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից, իսկ վերահսկողության խորհրդատվական ծառայությունները իրականցվել են «Սպեա Ինջինիրինգ» և «ԱյԱրԴի Ինջինիրինգ» համատեղ կազմակերպության կողմից։

Բնապահպանական արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել է վերահսկողություն՝ ապահովելու շինարարական աշխատանքների իրականացումը, որը համապատասխանում է ՇՄԿՊ-ի պահանջներին, որը պատրաստված է ԱԶԲ-ի բնապահպանական քաղաքականության և ՀՀ օրենսդրության համաձայն։

Կապալառուն առաջնորդվում է Տրանշ 3-ի համար ՇՄԱԳ-ով և ՇՄԿՊ-ով, որպես հայտի և պայմանագրի փաստաթղթերի և Տեղանքին հատուկ բնապահպանական կառավարման պլանների մաս, ինչպես նաև Կապալառուի կողմից մշակված շրջակա միջավայրի կառավարման պլանի, որը մանրամասնում է տեղանքին հատուկ բնապահպանական կառավարման պահանջների իրականացումը և կառավարումը, մասնավորապես՝ շինարարության ազդեցությունների մեղմացումը, մոնիթորինգը և հաշվետվությունների ներկայացման պահանջները՝ բնապահպանական արդյունավետությունն ապահովելու համար։ ՇՄԿՊ-ի հետ համապատասխանությունը պարբերաբար վերահսկվում և զեկուցվում է։

Շրջակա միջավայրի անվտանգության աշխատանքները հանդիսանում են վերահսկողության ընդհանուր կառավարում, խորհրդատվություն Կապալառուի բնապահպանական թիմի

համար ՏՇՄՊ-երի վերաբերյալ՝ ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության պահանջները բավարարելու, Կապալառուի կողմից շրջակա միջավայրի հետ կապված փաստաթղթերի վերանայման և հաստատման, աշխատանքային տարածքի և նախագծի շրջանակներում կապալառուի կողմից օգտագործվող բոլոր այլ տարածքների մոնիթորինգ, որոնք իրականացվում են Ինժեների ԲԱԱԱ-ի և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի շրջակա միջավայրի ազդեցության կառավարման ծառայությունների կողմից։

2 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Ծրագրի նկարագրություն

Հայաստանի Հանրապետությունը ընտրել է Բավրա-Երևան-Ագարակ երթուղին՝ որպես Հյուսիս-հարավ ճանապարհի միջանցք, որը պետք է վերականգնվի, վերակառուցվի, լայնացվի և նշանակել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) «Ճանապարհային դեպարտամենտին»՝ համակարգելու աշխատանքը։

Բազմափուլ ֆինանսավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ) նախատեսված է վերականգնել և արդիականացնել հյուսիսից հարավ ձգվող ճանապարհները՝ նոր, բարեկարգված և ընդլայնված հյուսիս-հարավ մայրուղի ձևավորելու նպատակով։ Հիմնական նպատակն է ընդլայնել առկա երկշերտ ճանապարհները (հիմնականում ոչ բարվոք վիճակում)՝ վերածելով չորս գոտիով ճանապարհների հնարավորության դեպքում գոյություն ունեցող երթուղիների երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկշերտ ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ չորս գոտիով ճանապարհ հնարավոր չի լինի կառուցել։

ԲՖԳ-ի շրջանակներում Ասիական զարգացման բանկը Հայաստանի կառավարությանը տրամադրել է վարկ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի բարելավման ծրագրի համար Մ1 Թալին-Գյումրի ճանապարհի Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի (կմ 71+500-ից մինչև 90+200) վերակառուցման և բարելավման աշխատանքներն իրականացնելու համար։

Տրանշ 3-ը սկսվում է Թալին համայնքում կմ 71+500-ում և ավարտվում կմ 90+200-ում՝ Լանջիկ համայնքին մոտ (մոտավորապես 18.7 կմ)։ Տվյալ ճանապարհը ներկայումս 2-րդ կատեգորիայի ճանապարհ է և ունի 2 հակառակ ուղղություններով երթևեկություն։ Վերակառուցումից հետո ակնկալվում է, որ ճանապարհահատվածը կդառնա բետոնյա ծածկով 1-ին կատեգորիայի ճանապարհ։

Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ 9 ուղեանցների վերակառուցումը ֆինանսավորում է Տրանշ 3-ի խնայողությունների միջոցով։ Տվյալ աշխատանքները իրականացվել են տեղացի կապալառուների կողմից և վերահսկվել վերահսկող խորհրդատուի/ինժեների կողմից Տրանշ 3-ի համար և ավարտվել են 2017թ. դեկտեմբերի 27-ին։

Նկար 1՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 3



2.2 Ծրագրի պայմանագրեր և կառավարում

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ԱԶԲ-ը կանոնավոր կերպով իրականացնում է դիտարկումներ և ստուգումներ՝ ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (SPS 2009) չափանիշներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ն կաջակցի «ՃԴ»-ին կառավարելու սոցիալական և բնապահպանական ազդեցությունները և ռիսկերը, այդպիսով նպաստելով երկարաժամկետ ներդրումների կայնության խթանմանը:

Կոնտակտային տվյալներ՝ Վ. Սարգսյան փողոց 2, Կամար բիզնես կենտրոն, 7-րդ հարկ

0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ +374 10 512300, Ֆաքս՝ +374 10 546374

www.adb.org/armenia

«ՃԴ» հիմնադրամը իրականացնում է ծրագրի իրականացման ամենօրյա կառավարում: «ՃԴ» հիմնադրամը ներառում է սոցիալական և բնապահպանական անձնակազմ, որոնց պատասխանատվությունների թվին է պատկանում ծրագրի բնապահպանական ամբողջ հարցերի կառավարումը:

Կոնտակտային տվյալներ՝

Հեռ.՝ +37410 511 391

Էլ. փոստ՝ info@armroad.am

www.armroad.am

Վերահսկող խորհրդատու/ինժեները իրականացնում է ամբողջ շինարարական աշխատանքների վերահսկողությունը և ծրագրի հաշվետվությունը: Խորհրդատուի շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության հետ կապված, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվություն ներկայացնելու համար:

Կոնտակտային տվյալներ՝

Էլ. փոստ՝ t3_talinlanjik_spea_ird@irdeng.com

Կապալառուները իրականացնում են շինարարական աշխատանքներ: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է Կապալառուի ՇՄԿՊ-ի, ՏՇՄԿՊ-երի պատրաստման և իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվության համար:

Կոնտակտային տվյալներ՝

Էլ. փոստ՝ sinohydro_am_tl@163.com

ՃԴ բնապահպանական և սոցիալական անձնակազմ

Ծրագրի ազդեցության կառավարման աշխատանքները ստանձնել են՝

Մարիամ Թաթուլյանը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հարցերով մասնագետ, ով պատասխանատու է ծրագրի բնապահպանական կառավարման և ՀՀ բնապահպանական օրենսդրությանը համապատասխանելու, ինչպես նաև ծրագրերի պատրաստման և իրականացման ընթացքում դոնոր կազմակերպությունների անվտանգության

քաղաքականությունների՝ ներառյալ նախագծման, շինարարության և վերահսկողության համար:

Շուշան Քոչարյանը՝ սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար, ով պատասխանատու է ծրագրի սոցիալական կառավարման և ՀՀ ազգային օրենսդրությանը համապատասխանելու, ինչպես նաև ծրագրերի իրականացման ընթացքում դոնոր կազմակերպությունների անվտանգության քաղաքականությունների՝ ներառյալ շինարարության և վերահսկողության համար:

Խորհրդատուի բնապահպանական անվտանգության բաժին

Ներկայումս Խորհրդատուի բնապահպանական անվտանգության հարցերով բաժինը բաղկացած է՝

Էդիտա Վարդգեսյան՝ բնապահպանական հարցերով մասնագետ, ով պատասխանատու է բնապահպանական անվտանգության ընդհանուր կառավարման համար: Նա պայմանագրային աշխատակից է:

Տիգրան Գրիգորյան՝ սոցիալական զարգացման, վերաբնակեցման և գենդերային հարցերով մասնագետ, ով պատասխանատու է սոցիալական անվտանգության կառավարման և սոցիալական անվտանգության առումով շինարարական գործընթացների համապատասխանության համար, ներառյալ տեղամասային պարբերական այցելություններ, ինչպես նաև սոցիալական մոնիթորինգ և հաշվետվություն:

Բորիս Գասպարյան՝ հնագիտության մասնագետ (ՀԳ), ով պատասխանատու է ճանապարհահատվածում հնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվության համար, շինարարական աշխատանքների համապատասխանության՝ համաձայն Հայաստանի հնագիտական օրենսդրության, ինչպես նաև տեսչական այցեր աղբավայր և բետոնե գործարանի տեղամասեր՝ հնագիտական գնահատման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում նրա մուտքերը եղել են՝ ամսական 0 անգամ:

Կապալառուի առողջության և անվտանգության, բնապահպանական, հնագիտական և սոցիալական բաժին

Բաժինը բաղկացած է հինգ անդամից՝

Պրն. Ժոնգ Ժեն Մին՝ ԱԱՇՄ ղեկավար, պատասխանատու է բաժնի ընդհանուր կառավարման համար։

Հովհաննես Թովմասյան՝ բնապահպանական հարցերով մասնագետ, ով աջակցում է ԱԱՇՄ բաժնի ղեկավարին շրջակա միջավայրի կառավարման պլանի իրականացման համար։

Մարտին Ասատրյան՝ սոցիալական ազդեցության հարցերով մասնագետ, ով պատասխանատու է սոցիալական հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը։

Աշոտ Ռնազյան՝ անվտանգության և առողջության հարցերով մասնագետ, ով պատասխանատու է անվտանգության և առողջության հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը։

2.3 Ծրագրի աշխատանքները ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում

Շինարարական աշխատանքներ չեն իրականացել հաշվետու ժամանակահատվածում։
Ճանապարհը բացվել է երթևեկության համար 2022թ. հոկտեմբերի 14-ին։

2.4 Ծրագրի նախագծման ցանկացած փոփոխության նկարագրություն

Հաշվետու ժամանակահատվածում որևէ փոփոխություն կապված նախագծման հետ տեղի չի ունեցել։

2.5 Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված ցանկացած փոփոխության նկարագրություն

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական մեթոդների հետ համաձայնեցված որևէ փոփոխություն տեղի չի ունեցել։

3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Բնապահպանական անվտանգության գործողությունների ընդհանուր նկարագրություն

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը իրականացնում է ծրագրի իրականացման ամենօրյա կառավարում: «ՃԴ» հիմնադրամը ներառում է սոցիալական և բնապահպանության անձնակազմ, որոնց պատասխանատվությունների թվին են պատկանում ծրագրի ամբողջ սոցիալական և բնապահպանական հարցերի կառավարումը:

Ծրագրի Վերահսկողության խորհրդատուն/Ինժեները իրականացնում է ամբողջ շինարարական աշխատանքների վերահսկողություն և ծրագրի հաշվետվություն: Խորհրդատուի շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության տեսանկյունից, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվության համար:

Կապալառուները իրականացնում են շինարարական աշխատանքներ: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է Կապալառուի ՇՄԿՊ-ի, ՏՇՄԿՊ-երի մշակման և իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվության համար:



3.2 Բուսահողի կառավարում

Հաշվետու ժամանակահատվածում բուսահող չի հանվել և պահեստավորվել:

Ինչպես նախկինում զեկուցվել է, մինչև վերաօգտագործումը պահպանված բուսահողի ընդհանուր քանակը կազմել է 173,498,52մ³, որից 22,560.4 մ³-ը վերաօգտագործվել է Մաստարա-ԲՊ-1-ի համար ճանապարհի լանջերի կանաչապատման և վերականգնման համար: Վերաօգտագործումից հետո, մնացել է 150,938.12 մ³ բուսահող, որը նախատեսվում է հանձնել Արագածոտնի մարզպետարանին: Ծրագրի ողջ ընթացքում օգտագործվել են Ինժեների կողմից հաստատված վեց բուսահողի պահպանման վայրեր: Երեք տեղամասերը հանձնվել են Թալին համայնքին 2024թ.-ի հոկտեմբերի 3-ին: Երկու տեղամասեր (Լանջիկ-4 ՏՀԾ կմ 87+000-ում և Լանջիկ-1 ՏՀԾ կմ87+300-ում) պահվել են Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի համար:

Հետագա մանրամասները ներկայացված են **Հավելված Ա**-ում:

3.3 Շինարարական աղբի կառավարում

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, որևէ անպիտան ենթահողի նյութ կամ թափոն չի արձանագրվել:

Ըստ Կապալառուի հաշվետվության՝ 2022թ. հոկտեմբերի վերջին, պահպանված ասֆալտի թափոնի ընդհանուր գումարը եղել է 0:

Հետագա մանրամասները ներկայացված են **Հավելված Ա**-ում:

3.4 Բետոնի, ասֆալտի, քարջարդիչ գործարանների և ճամբարների շահագործում

Կապալառուն տեղեկացրել է, որ բետոնի գործարանը չի փակվի կամ հանձնվի, այն կշահագործվի Լանջիկ-Գյումրի հատվածի համար: Նույն կերպ, Մարալիկի ասֆալտի գործարանը ևս չի փակվի կամ հանձնվի, այն կշարունակի շահագործվել Լանջիկ-Գյումրի հատվածի համար:

Կմ 79+600-ում գտնվող ժամանակավոր քարջարդիչ գործարանը ապամոնտաժվել է, իսկ տարածքը հանձնվել է Մաստարա համայնքին ԹՎԺ-ի ընթացքում:

Կապալառուի օբյեկտների համար գործողությունների պլանը գործառնական է մնացել Լանջիկ-Գյումրի հատվածի համար, որոնք մշակվել և ներկայացվել է:

3.5 Քարհանքերի և բացահանքերի շահագործում

Ծրագրի ընթացքում, Կապալառուն օգտագործել է Մաստարա-ԲՊ-1 տեղամասը լիցքի համար ենթահող վերցնելու նպատակով Մաստարա համայնքում կմ 86+400-ում (ՏՇՄԿՊ-ը պայմանականորեն հաստատվել է 2018թ.-ի մարտի 30-ին և վերջնական հաստատումը տրվել է 2018թ.-ի ապրիլի 13-ին)։

Փակման հաշվետվությունը ապահովված է։ 2023թ.-ի նոյեմբերի 28-ին Մաստարա-ԲՊ-1 հանձնվել է Թալին համայնքի և Մաստարա գյուղի համայնքապետարանին։

3.6 Ծառահատման/ծառատնկման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում որևէ ծառահատում կամ ծառատնկում չի իրականացվել։ Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի համար ծառերի կառավարման ծրագիրը ավարտված է 2021թ.-ին։

Ինժեների կողմից անցկացված մոնիթորինգը հաստատեց, որ Մարալիկի ԲԳ-ի տարածքում Կապալառուի գործողություններով պայմանավորված, 6 բարդի վնասվել և չորացել է։ Սա զեկուցվել է՝ որպես անհամապատասխանություն և ներառվել է բնապահպանական խախտումների ցանկում։ Համաձայն ՇՄԱԳ, ՇՄԿՊ և ԿՇՄԿՊ պահանջների՝ Կապալառուին հրահանգվել է փոխհատուցել՝ տնկելով 60 ծառ նախքան ծրագրի ավարտը։

2025թ.-ի առաջին հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, Կապալառուն իրականացրել է ծառատնկման աշխատանքներ Անի, Ախուրյան և Ազատան համայնքներում։ Ընդհանուր 140 ծառ տնկվել է վնասը փոխհատուցելու համար, 70 ծառ հատկացվել է Թալին-Լանջիկ հատվածին, իսկ մյուս 70-ը՝ Լանջիկ-Գյումրի հատվածին։

3.7 Շինարարական տեղամասի աուդիտներ

Շինարարական տեղամասերի աուդիտները իրականացվել են՝ ըստ մոնիթորինգի ծրագրի, ԱԶԲ անվտանգության և ՇՄԿՊ պահանջների: Շրջակա միջավայրի մոնիթորինգը անցկացվել է Կապալառուի բնապահպանական անձնակազմի կողմից ստուգելու համապատասխանությունը՝ համապատասխանաբար լրացված ստուգաթերթիկների հետ: Ինժենների բնապահպանության մասնագետը Գործատուի և Կապալառուի բնապահպանության մասնագետների հետ համատեղ անցկացրել է տեղամասային այցելություններ՝ գնահատելու Կապալառուի գործունեության համապատասխանությունը ՇՄԱԳ/ՇՄԿՊ և ԿՇՄԿՊ պահանջներին:

3.8 ԱԶԲ առաքելություններ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, ԱԶԲ առաքելությունը տեղի է ունեցել 2025թ. նոյեմբերի 17-ից 28-ը, որոնց ընթացքում քննարկվել է ծրագրի փակման գործընթացները:

3.9 Խնդիրների լուծում (հիմվելով անհամապատասխանության ծանուցումների վրա)

Հաշվետու ժամանակահատվածի համար չկան արձանագրություն կապված լուծված կամ չլուծված անհամապատասխանությունների հետ կապված:

3.10 Միտումներ

Հաշվետու ժամանակահատվածի համար առկա արձանագրություն չկա:

3.11 Շրջակա միջավայրի վրա չնախատեսված ազդեցություններ կամ ռիսկեր

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, շրջակա միջավայրի վրա որևէ չնախատեսված ազդեցություն կամ ռիսկ չի հայտնաբերվել:

4 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

4.1 Ընթացիկ հաշվետու ժամանակահատվածում անցկացված մոնիթորինգի արդյունքներ

Սույն հաշվետու ժամանակահատվածում չափումներ չեն անցկացվել:

4.2 Առողջություն և անվտանգություն

4.2.1 Համայնքի առողջություն և անվտանգություն

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, համայնքի առողջության և անվտանգության հետ կապված որևէ գործողություն չի արձանագրվել:

4.2.2 Աշխատակիցների անվտանգություն և առողջություն

Որևէ պատահար տեղի չի ունեցել հաշվետու ժամանակահատվածում:

4.3 Վերապատրաստման դասընթաց

Հաշվետու ժամանակահատվածում չի իրականացվել անձնակազմի վերապատրաստում հետևյալ թեմաների վերաբերյալ՝ բնապահպանական, առողջության և անվտանգության, ինչպես նաև հնագիտական գտածոների:

5 ԿՇՄԿՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

5.1 ԿՇՄԿՊ-ի վերանայում

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ԿՇՄԿՊ-ի հետ կապված փոփոխություններ չեն իրականացվել։

Հավելված Ա-ում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն ՏՇՄԿՊ-ների մասին։

6 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1 Արդյունավետ պրակտիկա

Արդյունավետ պրակտիկայի գործեր չեն արձանագրվել հաշվետու ժամանակահատվածում:

6.2 Բարելավման համար հնարավորություններ

Հաշվետու ժամանակաշրջանում Կապալառուն ՇՄԱԳ/ԲԿՄՊ/ԿՇՄԿՊ-ին իր համապատասխանության բարելավման հնարավորությունը բաց է թողել, ներառյալ աշխատանքի առողջությունը և անվտանգությունը:

7 ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

7.1 Բողոքներ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, առկա բողոքներ չեն արձանագրվել ըստ ծրագրի ԲԼՄ-ի։

Ընդհանուր առմամբ, ծրագրի մեկնարկից սկսած, բողոքները արդյունավետ կերպով լուծվել են ժամանակին հետաքննության միջոցով, ինչպես նաև տուժողների հետ խորհրդակցություններով և համապատասխան ուղղիչ գործողությունների իրականացմամբ։

Բողոքները ստացվել են ծրագրի իրականացման ընթացքում, որոնք հիմնականում կապված են եղել հողերի օտարման, վնասման և մուտքի խնդիրների (ժամանակավորապես կամ մշտական մուտքի ճանապարհներ), ոչ թույլատրելի հողերի օգտագործման, փոշու և վնասված հացահատիկների կամ գույքի փոխհատուցման հետ։ Բողոքների ընդհանուր քանակը (և՛ գրավոր, և՛ բանավոր) 36 է, և բոլորը լուծվել են։ Բավարարման նամակները բոլոր գործերի հետ կապված առկա են։

Որևէ առկա կամ չլուծված բողոք չի մնացել։

8 ՀՆԱԳԻՏԱԿԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ/ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում որևէ հնագիտական խնդիր չի արձանագրվել։

9 ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում, ծրագիրը ապահովել է, որ նախագծի աշխատանքները համապատասխան լինեն ազգային օրենսդրությանը: 2025թ.-ի երրորդ և չորրորդ եռամսյակների համար Կապալառուի բնապահպանական կանոնավոր հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը Հայաստանի օրենսդրությամբ:

Թերությունների շտկումը ավարտվել է: Ըստ Կապալառուի՝ որևէ թափոն չի առաջացել հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

Տվյալ հաշվետու ժամանակահատվածում, բուսահողը ո՛չ հեռացվել է, ո՛չ պահպանվել: Կապալառուն զեկուցել է, որ բուսահողի տեղամասերից երեքը հանձնվել են Թալին համայնքին 2024թ.-ի հոկտեմբերի 3-ին, մինչ երկու բուսահողի պահպանման տեղամասեր գտնվում են Լանջիկ համայնքում, որոնք պահպանվել են Լանջիկ-Գյումրի հատվածի համար (**Հավելված Ա**):

Ծառահատում կամ ծառատնկում չի իրականացվել հաշվետու ժամանակահատվածում: Թալին-Լանջիկ հատվածի համար ծառերի կառավարման ծրագիրը ավարտվել է 2021թ.-ին: Կապված այն հանգամանքով, որ Մարալիկի բետոնի գործարանի տարածքում վնասվել է վեց բարդի, Կապալառուն 140 ծառ է տնկել Անի, Ախուրյան և Ազատան համայնքներում. 70-ը Թալին-Լանջիկ հատվածի համար, 70-ը Լանջիկ-Գյումրի հատվածի համար:

Սույն հաշվետու ժամանակահատվածի ընթացքում փոշու, աղմուկի կամ վիբրացիայի որևէ նոր չափումներ չեն անցկացվել:

Տվյալ ժամանակահատվածի ընթացքում Կապալառուի կողմից չի իրականացվել վերապատրաստման դասընթացներ՝ բնապահպանական, առողջության և անվտանգության, ինչպես նաև հնագիտական գտածոների վերաբերյալ:

10 2026թ. հունվար-հունիս ժամանակահատվածի համար գործողությունների պլան

Քանի որ ԹՎԺ-ն ավարտվել է, հաջորդ հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտի», Ինժեների և Կապալառուի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝ Լանջիկ-Գյումրի հատվածում օգտագործվող Կապալառուի կառույցների գործողությունների պլանի հետևողական իրականացում և ավարտ:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա՝ Տրանշ 3, Թալին-Լանջիկ հատվածի ՏՇՄԿՊ-ների կարգավիճակը և տեղամասերի շահագործումը 2025թ.-ի դեկտեմբերի դրությամբ

N	Տարածքի անվանում	Պկ կմ	Հաստատված ՏՇՄԿՊ (Այո/Ոչ)	Շահագործման կարգավիճակ		
				Ժամանակավորապես դադարեցված	Ներկայումս շահագործվում է	Շահագործումը չի մեկնարկել
Բուսահողի կուտակման վայրեր (ԲԿՎ)						
1	Մաստարա -7 ԲԿՎ	76+600	Ա/ ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. նոյեմբերի 6-ին	Տեղամասը փակվել է 03.10.2024թ.-ին:		
2	Մաստարա -4 ԲԿՎ	80+800	Ա/ ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. հոկտեմբերի 12-ին	Տեղամասը փակվել է 26.04.2019թ.-ին:		
3	Մաստարա -1 ԲԿՎ	81+200	Ա/ ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. հոկտեմբերի 12-ին	Տեղամասը փակվել է 03.10.2024թ.-ին:		

4	Մաստարա -5 ԲԿՎ	85+200	Ա/ ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. հոկտեմբերի 12-ին	Տեղամասը փակվել է 03.10.2024թ.-ին:		
5	Լանջիկ-4 ԲԿՎ	87+000	Ա/ հաստատվել է 2017թ. հունվարի 13-ին		Կհանձնվի ԹՎԺ-ի ավարտին Լանջիկ-Գյումրի ճանապարհ ահատ վածի համար:	
6	Լանջիկ- 1 ԲԿՎ	87+300	Ա/ հաստատվել է 2017թ. հունվարի 13		Կհանձնվի ԹՎԺ-ի ավարտին Լանջիկ-Գյումրի ճանապարհ ահատ վածի համար:	
Հորատված ենթահողի թափոնների վայրեր (ԹՎ)						

7	Թալին-3 ԹՎ	72+500	Ա/ հաստատվել է 2018թ. մարտի 13-ին	Տեղամասը փակվել է 29.09.2021թ.-ին:		
8	Մաստարա -6 ԹՎ	79+500	Ա/ հաստատվել է 2018թ. հուլիսի 27-ին	Տեղամասը բացվել է, բայց դեռ չի օգտագործվում:		
9	Մաստարա -3 ԹՎ	80+800	Ա/ ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. հոկտեմբերի 24-ին	Տեղամասը փակվել է 29.09.2021թ.-ին:		
10	Մաստարա -2 ԹՎ	82+300	Ա/ ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. հոկտեմբերի 24-ին	Տեղամասը փակվել է 28.11.2023թ.-ին:		
11	Մաստարա -9 ԹՎ	83+000	Ա/ հաստատվել է 2018թ. հուլիսի 27-ին	Տեղամասը փակվել է 28.11.2023թ.-ին:		

12	Լանջիկ-5 ԹՎ	87+200	Ա/ հաստատվել է 2021թ. հոկտեմբերի 18-ին	Տեղամասը փակվել է 29.09.2021թ.-ին:		
13	Լանջիկ-2 ԹՎ	88+500	Ա/ հաստատվել է 2017թ. մարտի 9-ին	Տեղամասը փակվել է 29.09.2021թ.-ին:		
Հողագրունտի հանույթի տարածք (ՀՀՏ)						
14	Մաստարա -ՀՀՏ-1	86+400	Ա/ հաստատվել է 2018թ. մարտի 13-ին, ՏՎՊ-ը հաստատվել է 2021թ.-ի նոյեմբերի 23-ին TL/IT/TR3/WS/21-372 գրությամբ:	Տեղամասը փակվել և հանձնվել է 28.11.2023թ.-ին:		
Ժամանակավոր պահեստավորման վայրեր						

16	Մաստարա - ԺՊՎ-1	79+600	Այո/ հաստատվել է 2018թ. նոյեմբերի 30-ին	Տեղամասը հանձնվել է, որևէ փակման հաշվետվություն չի ներկայացվել։		
17	Մարալիկ-ԺՊՎ-3	95+950 Մարալիկի ԱԳ-ի մոտ	Այո/ հաստատվել է TL/IT/TR3/WS/21-385 գրությամբ 2021թ. դեկտեմբերի 7-ին		Կհանձնվի ԹՎԺ-ի ավարտին Լանջիկ-Գյումրի ճանապարհ ահատվածի համար	
18	Մաստարա -2 ԹՎ ասֆալտի թափոնի համար	82+300	Այո/ հաստատվել է TL/IT/TR3/WS/22-30 գրությամբ 2022թ. փետրվարի 25-ին	Տեղամասը փակվել է 28.11.2023թ.-ին։		

19	Մաստարա -9 ԹՎ ասֆալտի թափոնի համար	83+000	Այո/ հաստատվել է TL/IT/TR3/WS/22-30 գրությամբ 2022թ. փետրվարի 25-ին	Տեղամասը փակվել է 28.11.2023թ.-ին։		
Բետոնի և ասֆալտի գործարաններ						
20	Մարալիկ ԲԳ		Այո/պայման ականորեն հաստատվել է 2017թ. մարտի 9-ին/ թարմացված ՏՇՄԿՊ-ը պայմանակ անորեն հաստատվել է TL/IT/TR3/WS/22-10 գրությամբ 2022թ.		Կհանձնվի ԹՎԺ-ի ավարտին Լանջիկ-Գյումրի ճանապարհ ահատվածի համար։	

			փետրվարի 7-ին			
21	Մարալիկ ԱԳ		Այո/ պայմանակ անո րեն հաստատվել է 2020թ. դեկտեմբերի 17-ին		Կհանձնվի ԹՎԺ-ի ավարտին Լանջիկ-Գյումրի ճանապարհ ահատվածի համար:	
Ջարդիչ մեքենայի տարածք						
22	Մաստարա	79+500	Ա/ հաստատվել է 2018թ.-ի մայիսի 4-ին	Տեղամասը փակվել է:		
Շինարարական ճամբար (ՇՃ)						
23	Մարալիկ		Ա/ հաստատվել է 2017թ. մարտի 9-ին		Կհանձնվի ԹՎԺ-ի ավարտին Լանջիկ-Գյումրի ճանապարհ ահատվածի համար:	